

*Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ Վ. Պարտիզունու անուան
Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա
դասաւանդման մեթոդիկայի ամբիոն,
բանասիրական գիտութիւնների թեկնածու, դոցենտ*

**ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԺԱՆՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ
«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ»-ՈՒՄ**

Բանալի բառեր` նամակագրական ժանր, Մատթէոս Մամուրեան, «Արեւելեան մամուլ», մտաւորականների երկխօսութիւն, գրական գնահատութիւններ

Keywords: epistolary genre, Matteos Mamurian, “Eastern Press”, dialogue between intellectuals, literary estimations

Հայ գրամշակութային աշխարհում դժուար է գերագնահատել Զմիւռնիայի դերակատարութիւնը: Բաւական է նշել, որ առաջին դպրոցների, առաջին արեւմտահայ աշխարհաբար մամուլի` «Արշալոյս Արարատեան»ի տպագրութեան հանգամանքները կապուած են հենց այս վայրի հետ: Այս առումով բնութագրական է քննադատ Վահէ Օշականի բնորոշումը 1850-ականների Զմիւռնիայի մասին. «Գրական ճաշակ, արուեստի սէր, դպրոցական մակարդակ, օտար ազդեցութիւններու հանդէպ հաղորդ մտայնութիւն, մամուլ եւ առ հասարակ ընկերային կեանքի որակ – այս բոլոր կալուածներու մէջ Իզմիր կը գերագանցէ Պոլսոյ վիճակը»¹:

Այս համաբնագրում գրամշակութային իրենց կշիռով առանձնացան Գրիգոր Զիլինկիրեանի «Ծաղիկ»ը եւ Մատթէոս Մամուրեանի «Արեւելեան մամուլ»ը: Հենց այս վերջինի վրայ էլ կանգ է առել մեր ընտրութիւնը` պայմանաւորուած նրանով, որ յատկապէս նրա էջերի միջով կարելի է կազմել նամականու (էպիստուլեար) ժանրի զարգացման կորագիծը: Երկու պարբերականների ընդգծումը պատահական չէ, քանի որ «Արեւելեան մամուլ»ի խմբագիր Մ. Մամուրեանը իր նամականին սկսել է

¹ Օշական Վ., Արմենակ Հայկունի. արեւմտահայ առաջին նախառոմանտիքներէն, Հայկազեան Հայագիտական Հանդէս, Պէրոյթ, 1970, հ. Ա., էջ 172:

լոյս ընծայել «Օաղիկ»ում դեռ 1864-ից²՝ Վրոյր ծածկանունով, նախ «Ազգային նամակ մը», ապա՝ «Հայկական նամականի» խորագրով³: Այդ նամականին մի կողմից աչքի է ընկնում սուր քաղաքական հարցադրումներով, միւս կողմից երեսան է բերում նաեւ գեղարուեստական յատկանիշներ, գրականութեան լեզուի հետ կապուած հարցադրումներ:

«Օաղիկ»-ը ըստ էութեան նամակագրական ժանրի ձեւաորման սկիզբն է դնում, եւ այստեղ Շահնուր-Մամուրեանը միայնակ չէ: Պարբերականի էջերում լոյս են տեսել նաեւ Հիւզայի եւ Գարիբալդիի նամակները, Շառլ Մոնտեսքիւի «Պարսկական նամականի»ն, Պերճ ծածկանունով խմբագիր Գրիգոր Զիլինկիրեանի «Զմիւռնիական նամականի»-ն:

Նպատակադրումի եւ ուղղութեան առումով 1871-ից լոյս տեսնող «Արեւելեան մամուլ» հանդէսը կարելի է համարել «Օաղիկ»ի հոգեգաւակը: Չմոռանանք, որ «Հայկական նամականին» շարունակութիւն է գտնում «Արեւելեան մամուլ»ում՝ մինչեւ առանձին գրքով նոյն Զմիւռնիայում լոյս ընծայուելը՝ 1872-ը, որից յետոյ կրկնութիւնը անւորդ դիտելով՝ հեղինակը միայն առաջաբանն է տպագրում պարբերականում:

Պէտք է նկատել նաեւ, որ «Արեւելեան մամուլ»ում ժանրային ծաւալումները շատ անլի բազմազանութիւն են բերում: Այստեղ նամականու իրատեսակ իրացումն են «Թղթակցութիւններ»ը, որոնք հիմնականում քաղաքական, ընկերային բնոյթի են եւ լոյս են տեսնում Շահնուր ծածկանունով, որի տակ դարձեալ Մատթէոս Մամուրեանն է թաքնուած⁴, թէպէտ ընթերցողի համար դժուար չէ գուշակել Վրոյրի հետ ոճային նոյնութիւնը: Այն, որ այդ հատուածները եւս ներառում են նամականիի

² Տե՛ս՝ Վրոյր, Ազգային նամակ մը, Օաղիկ, կիսամսեայ հանդէս, Զմիւռնիա, տպ. «Տէտէեան», 1864, Գ. տարի, Է. շրջան, թիւ 101, 15 Դեկտեմբեր, էջ 316-318:

³ Անւորդ չէ նշել նաեւ «Օաղիկ»ի խմբագրական գնահատութիւնը, թէ «Ամէն հանրական թերթ իրեն համար մասնաւոր դիրք եւ նշանաբան մ'ունի, ուստի եթէ այսօր յօժարակամ կը փութանք հրատարակելու ներկայ ներածական նամակը, եթէ նաեւ շնորհակալութեամբ կը խոստանանք *Օաղկի* էջերը մեր բարեկամին ապագայ գրութեանց նուիրել, վասն զի գիտենք թէ ասիկա խորհիլ գիտցող մ'է, վասն զի գիտենք թէ իւր գրութիւնները *Օաղկին* պատիւը եւ գրական արժէքը կը յատկուր, վերջապէս վասն զի գիտենք թէ անիկա մեր հանդիսին ունեցած դիրքին եւ նշանաբանին կը համապատասխանէ» (Նոյն տեղում, էջ 316):

⁴ Ի դէպ, Մատթէոս Մամուրեանի պատուին կնքահայրը Շահնուր անունն էր ստուել Շահան Շահնուրին (Շահնուր Քերեսթէճեան):

մէջ, փաստում է նաեւ 1883-ի Յունիսի համարում տեղեկատուական ակնարկը՝ «Շարունակութիւն եւ վերջ Շահնուրի նամակին» (էջ 284):

«Թղթակցութիւններ»ը կարելի է առանձին սիւնակ անուանել, քանի որ խորագրի տակ հաւաքուած են տարբեր մտաւորականների գրութիւններ, այդ թում՝ Օերենցի (Յովսէփ Շիշմանեան), որոնք երբեմն երկխօսութիւն են նրա եւ Շահնուրի միջեւ: Սա ըստ էութեան ապահովում է նամակագրութեան երկկողմանի բնոյթը: Դրանցից մէկում, օրինակ, Շահնուրը բարձր գնահատութիւն է տալիս Օերենցի գրական շնորհին. «Իր անուան եւ ոճին նայելով՝ գրականութեան հինօրեայ զինուորներէն կ'երեւի, որոց տեսակը դժբաղդօրէն հատնելու վրայ է մեր մէջ գրչիկներու հրոսին մէջ: Գրիչ և իմաստ կը գործածէ նա, ինչպէս կ'գործածեն այժմ ռումբը ճշտութեամբ: Թէն *ձերունի*, սրտահոս խօսքեր, ջերմ հոգի ու թռիչք ունի: Շատ նիզակներ կոտրած է գրական մենամարտներու մէջ, եւ այժմ ազգային մեծ նպատակի մը նուիրած է իր բոլոր ճգունքը»⁵: Իսկ մենք գիտենք, որ Օերենցը, բացի գրական գործունէութիւնից, նաեւ հասարակական կեանքի գործօն մասնակից էր, յատկապէս նկատի ունենք հասունեան-հակահասունեան պայքարը: Ի դէպ, քննութիւնը ցոյց է տալիս, որ զուարթախոհ ոճի կողքին այս գրութիւններում տեղ են գտել նաեւ քննադատական դատողութիւններ ու վիճարկումներ⁶:

Մեծ մասամբ ընկերային-քաղաքական մտահոգութիւններ շօշափող այս գրութիւնների կողքին նկատելի դերակատարութիւն ունեն նաեւ գրական նիւթերը, երբ նոյն համարում Ասպետի (Սեդրաք Տէր-Սարգրսեան) «Ի յիշատակ Աբովեանի» քերթուածի կողքին եւ ի յաւելումն սրա տեղ է գտել թղթակցութիւն, որը, մեր կարծիքով ոչ պատահականօրէն, խմբագիրը սկսում է հենց Աբովեանի «Վերք Հայաստանի» վէպի ոճաւորումով. «Բարեկամ: Ինչ ներգործութիւն որ ունեցաւ Կիւրոսի զինուորին սուրը Կրետոսի որդոյն վրայ՝ նոյնն ունեցաւ կարծես Նոր Տարին իմ վրաս: Բացաւ լեզուս՝ որ բաւական ամիսներ՝ քաշուեր էր, այս տարբերութեամբ, որ փոքր Կրետոս ՚ի բնէ համր էր եւ հօրը մահուան վտանգն իրեն լեզու տուաւ, մինչդեռ իմ համրութիւնս կամաւոր էր, եւ Նոր Տարին,

⁵ Շահնուր, Թղթակցութիւն, Արեւելեան մամուլ, հանդէս ամսեայ, Զմիւռնիա, տպ. «Տէտէեան», 1872, երկրորդ տարի, Յուլիս, էջ 303:

⁶ Տե՛ս՝ Օերենց, Թղթակցութիւն, Արեւելեան մամուլ, հանդէս ամսեայ, Զմիւռնիա, տպ. «Տէտէեան», 1874, չորրորդ տարի, Նոյեմբեր, էջ 473-487:

նոր յոյսն ահա ինձ խօսք կ'տայ»⁷: Նամակներում ուշագրաւ դիտարկումներ կան նաեւ յոբելեանների առթիւ Գրիգոր Արծրունու եւ Ղեւոնդ Ալիշանի օրինակներով. «...Մին իր գրական գործունէութեան իբրեւ մեկնակէտ նկատելով յօդուած մը դաստիարակութեան վրայ, որ հրատարակուած էր «Մեղու Հայաստանի» մէջ 1865ին, կ'հրաւիրէր արտորնօք Ազգն՝ որոտընդոստ խմբագրականով մը, պատրաստուիլ քսանհինգամեակը տօնելու եւ իր ճակատը դաբնեայ պսակներ բոլորելու, միւսն՝ թէեւ կիսդարեան գրական ծանր ու նշանաւոր երկերով բեռնաւորուած, ազգային երախտագիտութեան ո եւ է հրապարակային ցոյցէ կ'խորշէր, ինչպէս մի քանի տարի առաջ ծանուցուած էր Բազմավէպի մէջ, եւ միայն իր քահանայական ձեռնադրութեան յիսնամեակը կրօնապէս տօնելու առաջարկը կ'ընդունէր»⁸: Այստեղ գրական գնահատութիւնների կողքին, որը, մեր կարծիքով, նաեւ Գրիգոր Արծրունու պարագային յենում է արեւմտահայոց մէջ ընդհանրացած կարծիքի վրայ եւ ոչ առանց Յակոբ Պարոնեանի միջամտութեան, կարելորը զուգակշիռն է, գրապատմական երեւոյթների ընդհանրացման փորձը:

Վերը նշուած զուգակշռի պահպանման առումով «Արեւելեան մամուլ»-ում կարելոր են նաեւ արեւելահայ միջավայրից նամակների հրատարակութիւնները, մասնաւորաբար Թիֆլիսից Յարոյի⁹՝ Նիկողայոս Տեր Յարութիւնեանի «Իմ նամակները» շարքը:

Փոխադարձ հիրընկալութեան օրինակ է Մատթէոս Մամուրեան – Գրիգոր Չիլինկիրեան տանդէմը: Եթէ «Արեւելեան մամուլ»ից առաջ Վրոյր-Շահնուրի նամականին լոյս էր տեսնում «Ծաղիկ»ում, ապա «Ծաղիկ»ի դադարից յետոյ Չիլինկիրեանի համար իր էջերն է բացում արդէն Մամուրեանի գլխաւորած պարբերականը, որի էջերում 1881-ից նամականու ձեւով սկսում է լոյս տեսնել «Ուղեւորութիւն ի Կ. Պոլիս» աշ-

⁷ Տե՛ս՝ Ասպետ, Ի յիշատակ Աբովեանի, Շահնուր, Թղթակցութիւն, Արեւելեան մամուլ, հանդէս ամսեայ, Զմիւռնիա, տպ. «Տէտէան», 1875, հինգերորդ տարի, Փետրուար, էջ 49, 62:

⁸ Շահնուր, Թղթակցութիւն, Արեւելեան մամուլ, ամսաթերթ ազգային եւ քաղաքական, Զմիւռնիա, տպ. «Մամուրեան», 1890, 20-րդ տարի, Մայիս, էջ 251:

⁹ Բանասիրական մէկ ճշգրտում. կարծում ենք, շփոթ կայ Բախտիար Յովակիմեանի անձնանունների ցանկում, երբ Յարոյ ծածկանուան դիմաց Նիկողայոս Տեր-Յարութիւնեանի կողքին բերում է նաեւ Վրթանէս Փափագեանի անունը (Յովակիմեան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Ե., ԵՊՀ հրատ., 2005, էջ 243):

խատանքը: Գեղարուեստական ոճով շարադրուած այս գրութիւնները զմիւռնիացի ընթերցողին պարգում են հեղինակային ուղեւորութեան մանրամասները՝ քաղաքի նկարագրութիւններով, մտաւորական ու քաղաքական դէմքերի ուրուագծումով, որը Յ. Պարոնեանը յետագայում պիտի անուանէր «պտոյտ»ներ: Մ. Մամուրեանի օրինակով արդէն 1883-ին առանձին գրքով լոյս տեսաւ նաեւ Գր. Չիլինկիրեանի աշխատութիւնը¹⁰: Անտեսելու չէ եւս մի կարեւոր դրուագ. պարբերականում նոյնատիպ բովանդակութեան շուրջ տարբեր հեղինակների դատողութիւնները հաւաքուում են կա՛մ նոյն, կա՛մ յարակից համարների մէջ, ինչը հետաքրքրական քննարկումի ու համեմատութեան հնարաւորութիւն է բերում ընթերցողի համար: Այդպիսի մի օրինակ մեզ տալիս է Գր. Չիլինկիրեան-Յարոյ երկխօսութիւնը մամուլի դերի շուրջ, երբ ետեւ ետեւից բերուում են նրանց դիտարկումները¹¹:

Գր. Չիլինկիրեանի գրական գնահատականների մէջ նշանակալի է գեղարուեստական եւ տեղ-տեղ հրապարակագրական ոճով աչքի ընկնող յողուած-նամակներից մէկը, ուր տեսնում ենք պոլսահայ գրական կեանքի դիպուկ ու հասցեական ուրուագծումը՝ Ռէթէս Պերպերեան՝ «իւր քանահիւսական ու գրագիտական ընտիր հրատարակութիւններով», Մինաս Չերազ՝ «իւր լեզուագիտական եւ քանասիրական հմտութիւններուն նայելով տաղանդաւոր ըսուելու իրաւունքը շահած», Յովհաննէս Արշարունի՝ «ուսումնական եւ լեզուագէտ երիտասարդ», Ե. Տէմիրճիպաշեան՝ «բեղուն մտքով ու տաղանդով»¹² եւ այլք: Նրա նամակներն աչքի են ընկնում նաեւ օտար գրողներին ու մտաւորականներին տրուած գնահատութիւններով՝ Օգիւստ Կոնտ, Ալֆոնս Լամարթին, Էմիլ Զօլա եւ ուրիշներ:

¹⁰ Միայն մէկ նկատառում. նոյն 1882 թուականի թիւ 5-ում «Ուղեւորութիւնը...» ստորագրուած է Շահնուր, ինչը կարծում ենք, վրիպակ է: Նոյն խորագրով յաջորդող նամակները նորից Գր. Չիլինկիրեանինն են:

¹¹ Տէ՛ս՝ Չիլինկիրեան Գր., Ուղեւորութիւն ի Կ. Պոլիս...: Յարոյ, Իմ նամակները, Արեւելեան մամուլ, հանդէս ամսեայ, Զմիւռնիա, տպ. «Տէտէան», 1881, մետասաներորդ տարի, Նոյեմբեր, էջ 401-409, 409-421:

¹² Չիլինկիրեան Գր., Ուղեւորութիւն ի Կ. Պոլիս..., Արեւելեան մամուլ, հանդէս ամսեայ, Զմիւռնիա, տպ. «Տէտէան», 1882, երկուսասաներորդ տարի, Փետրուար, էջ 55:

«Արեւելան մամուլ»ում մէկ այլ խումբ են կազմում անստորագիր «Ռուսահայ պանդխտին նամակները», որտեղ Ռուսահայ պանդուխտը Իսահակ Յարութիւնեանն է: Պանդխտի նամակներից մէկում քննութեան նիւթը գրապատմական երեւոյթների գնահատութիւնն է՝ «Վերք...»ի տասնեակ տպագրութիւնների ընդգծումով, թարգմանական գրականութեան անհրաժեշտութեամբ, Գամառ Քաթիպայի, Պերճ Պոռեանի՝ նամակագրի համար անվիճարկելի տաղանդների ցաւալի լռութեան արձանագրութեամբ, որն ինքը բացատրում է սոցիալական գործօնով. «Մեր լաւագոյն բանաստեղծն *ստիպուած է* ուսուցչութեամբ պարապիլ, վիպասանն՝ թեմական վերատեսչութեամբ»¹³: Ուշագրաւ է նաեւ ռուսահայոց եւ տաճկահայոց գրականութիւնների փոխճանաչողութեան հարցադրումը, որը զարգացնելով, սակայն, վիճարկում է նաեւ երկու լեզուների կողք կողքի գոյութեան իրաւունքը: Ի հա՛րկէ, ինչ-ինչ դատողութիւններ թէ՛ գրականութեան, թէ՛ լեզուական իրողութիւնների շուրջ այստեղ կարող են ոչ միանշանակ ընկալուել, սակայն էականը զուգադիր քննութիւնն է:

Պոլսից թղթակցութիւններով «Ազգային նիշեր» խորագրով հանդէս են գալիս Քասիմը՝ «Ժամանակ» թերթի յայտնի խմբագրապետ Միսաք Գօչունեանը, Մերթը՝ Հրանդ Ասատուրը եւ ուրիշներ:

Նամակագրութեան մէջ ժառանգորդական տեսանկիւնից մեզ համար հետաքրքրական է արդէն 1890-ականներին Մատթէոս Մամուրեանի որդու՝ Հրանդ Մամուրեանի՝ Նուրիան ծածկանունով հրատարակուող «Յոնիական նամականի»-ն: Դրանցից մէկում, օրինակ, քննութեան է առնուած Վահան Զարդարեանի «Գրացուցակ»-ը, իսկ որ աւելի թեմատիկ նշանակութիւն ունի, Սիմոն Գաբամաճեանի «Առձեռն նամականի»-ն, որը գրքի անաչառ վերլուծութեան փորձ է, որովհետեւ «կը յուսայի անոր մէջ մեծ մասամբ գտնել գրական հրապարակին վրայ արժանիք ունեցող օտար եւ ազգային գրագիտաց գործերէն ընտիր հատուածներ ու նամակներ», որոնք միայն 270 էջից 50-55 երես են կազմում, - խոստովանում է հեղինակը: Սրա կողքին, սակայն, «... անուրանալի է որ աշխատութիւն եւ ընտրութիւն զանց չէ առած, մանաւանդ աշխարհաբառն միշտ մաքուր ու կոկիկ պահելու փոյթ չէ խնայած...», որ իր դասագրոց շարքին մէջ կ'աւելցնէ նաեւ այս «Առձեռն նամականի»-ն շատ առաւելութիւններով

¹³ Ռուսահայ պանդխտին նամակները, Արեւելան մամուլ, հանդէս ամսեայ, Զմիւռնիա, տպ. «Տէտէեան», 1886, ԺԶ. տարի, Դեկտեմբեր, էջ 572-573:

գերազանց քան ուրիշ նամականիներ»¹⁴: Նամականու ժանրի բնոյթի մէկ այլ փոփոխութիւն արձանագրում ենք նոյն 1901-ից՝ արդէն բաց նամակաների երեսն գալով: Ի դէպ, այս թուականից խմբագիր է դառնում հենց Հրանդ Մամուրեանը: Այս շրջանի համար ուշագրաւ են Կարապետ Ստեփանեանի նամակները, որոնք այլևս ունեն հասցեատէրեր եւ բացէիբաց երկխօսութիւն-գնահատութիւնների նոր պատուհաններ են բերում: Այս առումով արժէ յիշատակել «Բիւզանդիոն»-ի խմբագիր Բիւզանդ Քէչեանին ուղղուած նամակը, որտեղ դժգոհանք կայ խմբագրական միջամտութիւնների առթիւ: Այստեղ հետաքրքրականը խմբագիր-հեղինակ յարաբերութեան ճշգրտման փորձն է, խմբագրական էթիկայի սահմանումը, որտեղ նամակագիրը «խորհուրդ է տալիս» խմբագրական իրաւունքը իրացնել ոչ թէ բուն հեղինակային տեքստում, այլ ծանօթագրութիւնների տեսքով¹⁵:

1902-ին «Բաց նամակ առ Ռուբէն Զարդարեան» կտորով գնահատում է գրողի արձակը, եւ որ ամենակարեւորն է, իր խօսքը տանում է բնագրական վերլուծական բառապաշարով՝ յղում կատարելով նախորդ համարում արձակագրի լոյս ընծայած «Վա՛խ, ես մեռնե՛ի» գրութեանը, թէ «Արհամարհեալ սէրը ու լքեալ կինը ձուլեցին ձեր մատներու շարժած փետուրին կրկին կտուցները, ոճիրներու ահաւորին դէմ՝ սիրող, յուսացող ու ներող սիրտն է ձեր կաղամարը, այդ սիրտը մեր մէջ տակաւին չէր ելած բեմ՝ իր իսկութեամբը...»¹⁶: Նամանօրինակ մի գնահատական է ներկայացուած նաեւ 1902-ի համարներից մէկում Գնէլի՝ Գագիկ Տեւէճեանի՝ նորից նախորդող համարում լոյս տեսած «Հայրասպանը» պատմուածքի առթիւ՝ խորհուրդ տալով շարունակել ցաւոտ նիւթերի արծարծումը, որքան էլ այն ընթերցողներից ոմանց կամ հասարակութեան քիմքին հաճելի չթուայ: Սա ուշագրաւ է գրական գործը անմիջական արձագանգի ար-

¹⁴ Նուրհան, «Յոնիական նամականի», Արեւելեան մամուլ, ամսաթերթ ազգային, գրական եւ քաղաքական, Զմիւռնիա, տպ. «Մամուրեան», 1893, ԻԳ. տարի, Օգոստոս, էջ 387-388:

¹⁵ Ստեփանեան Կ., Բաց նամակ առ Բիւզանդ Էֆ. Քէչեան, Արեւելեան մամուլ, կիսամսեայ, Իգմիր, տպ. «Մամուրեան», 1901, ԼԱ. Տարի, թիւ 4, 15 Փետրուար, էջ 170:

¹⁶ Ստեփանեան Կ., Բաց նամակ առ Ռուբէն Զարդարեան, Արեւելեան մամուլ, կիսամսեայ ազգային, գրական ու քաղաքական, Իգմիր, տպ. «Մամուրեան», 1902, 32-րդ տարի, թիւ 2, 15 Յունուար, էջ 135:

Ժանացնելու, քննադատութեան կամ գրախօսութեան անանդոյթի ձեւաւորման տեսակէտից¹⁷, որը նաեւ նամականու ժանրային դրսեւորման ձեւերից մէկն է, եւ ինչը կայուն նախասիրութիւն է Կ. Ստեփանեանի համար:

1908-ը արեւմտահայ մտաւորականութեան համար նոր խանդավառութիւնների առիթ դարձաւ, եւ այդ խանդավառութիւնը արտայայտուեց առաջին հերթին մամուլի էջերում: Այս առումով ուշագրաւ է նոյն թուականի 32-րդ համարում իմբագրական ծանօթութեամբ Ռուբէն Զարդարեանի՝ յուլիս 30-ին Ֆիլիպէից ուղղուած նամակը. «Վաղն իսկ կը մեկնիմ Պոլիս, ուր այնքան գործ կայ կատարելիք: ... Շնորհակալութեամբ ստացած եմ Մամուլները (խօսքը «Արեւելեան մամուլ»ի համարների մասին է - Բ.Ա.), որոնք երկար ատենէ ի վեր կարօտցած էի. կը թերթեմ գանոնք գուրգուրանքով ու կարօտով, եւ անոնց մէջ կը վերագտնեմ շատ քաղցր յիշատակներ»:

«Մամուլ»-ը նկատած եմ միշտ իմինս, հետեւաբար սիրով կը վերադառնամ իրեն՝ ամէն անգամ որ տրամադրելի ժամանակ ունենամ»¹⁸ (էջ 760): Եւ իսկապէս, նա՝ արեւմտահայ մամուլի երախտաւորներից մէկը, 1909-1914 թթ. ձեռնամուխ եղաւ հայ մամուլի ամէնից ուշագրաւ անուններից մէկի՝ «Ազատամարտ»-ի հրատարակութեանը:

Անտեսելու չէ այն հանգամանքը, որ նոյն 1908-ին, կարճ ժամանակի համար, զուգահեռ լոյս տեսաւ «Արեւելեան մամուլ» ազգային, գրական եւ քաղաքական եռամսեան: 1909-ին յայտնի պատճառներով ընդհատուած «Արեւելեան մամուլ»-ը սկսում է լոյս տեսնել միայն 1919-1922 թթ.՝ արդէն իբրեւ ազգային եւ քաղաքական օրաթերթ, որտեղ, հասկանալիօրէն, ելնելով պարբերականի նոր ուղղութիւնից, նամակագրութիւն այլեւս չենք տեսնում:

Եթէ ընդհանրացնելու լինենք, կարող ենք արձանագրել, որ «Արեւելեան մամուլ»-ում առաջին տասնամեակում՝ 1870-ականներին, նամակները հիմնականում տեղեկատուական, ճանապարհորդական

¹⁷ Տե՛ս՝ Ստեփանեան Կ., Առ Պ. Գնլ, Արեւելեան մամուլ, կիսամսեայ, Իզմիր, տպ. «Մամուրեան», 1902, ԼԲ. տարի, թիւ 13, 1 Յուլիս, էջ 578:

¹⁸ Զարդարեան Ռ., Արեւելեան մամուլ, շաբաթաթերթ ազգային, գրական ու քաղաքական, Իզմիր, տպ. «Մամուրեան», 1908, 38-րդ տարի, թիւ 32, 5 Օգոստոս, էջ 760:

բնոյթ ունեն, իբրեւ ձեւ՝ բնութագրական են գրեթէ բոլոր յօդուած-թղթակցութիւններին եւ հիմնականում շօշափում են ընկերային-քաղաքական հարցադրումներ: Արդէն 1890-ականներին, պայմանաւորուած նաեւ գրամշակութային աշխուժութեամբ, թե՛ արեւելահայ, թե՛ արեւմտահայ բնութագրումներում երեւան են գալիս զուտ գրական գնահատութիւնները, որտեղ ենթադրում է նաեւ փոխադարձ երկխօսութիւն: Իսկ 1900-ականներին նամակը իր բնոյթով եւ յստակ հասցեատերերի առկայութեամբ մօտենում է էպիստոլեար ժանրի դասականացած ըմբռումին:

KNARIK ABRAHAMYAN

**THE DEVELOPMENT OF EPISTOLARY
GENRE IN “AREVELYAN MAMUL”**

SUMMARY

The article is dedicated to the one of the most valuable magazines “Eastern Press”, the development map of epistolary genre on its pages and the role of the editor Matteos Mamurian in this process. The conclusion is that in the beginning of his publishing years (1870s) the genre has travelling and informative character, but in the next decades we notice that both western and eastern estimations have literary features (Grigor Tchilingirian, Haro, Garabed Stepanian and others), that causes dialogues between intellectuals and writers. And we can say that at the beginning of the 20th century epistolary genre in the “Eastern Press” appropriates its classical recognition.